ԽՈՐ ՎԻՐԱՊ ՎԱՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՎԵՀԱՐԱՆ

Արդեն ինն ամիս է, ինչ գործում է Խոր Վիրապ վանքի Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Միությունը: Այն պետական հաստատում է ստացել 4 հոկտեմբեր 1990 թ.: Միության մաս են կազմում շուրջ 50 երիտասարդ ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք իրենց առջև նպատակ են դրել ավելի մոտիկից ծանոթանալ Հայ Եկեղեցուն, որպեսզի հետագայում իրենք ևս հնարավորություն ունենան կրոնի դասեր ավանդելու հայկական միջնակարգ դպրոցներում: Միությունը հետապնդում է մի շարք մշակութային և բարեգործական նպատակներ, ինչ որ ողջունելի է և խրախուսելի: Միությունը հրատարակում է նաև «Գավիթ» թերթը:

Նոյեմբերի 17-ին, շաբաթ օրը, Խոր Վիրապ վանքի Հայ Երիտասարդաց Միությունը Տ. Մխիթար քահանայի առաջնորդությամբ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին և ստացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի օրհնությունը: Որդիական երախտիքի խոսքով հանդես եկավ Միության ատենապետ, Խոր Վիրապ վանքի ծիսակատար քահանա Տ. Մխիթար քհն. Սարիբեկյանը և պատմեց իրենց Միության գործունեության ու ապագայի ծրագրերի մասին: Հանդես եկան նաև Միության ուրիշ անդամներ:

Վեհափառ Հայրապետը օրհնեց և քաջալերեց նրանց, արտահայտելով իր հայրապետական գնահատանքն ու հայրական գոհունակությունը:

ՀԱՂՊԱՏԱՎԱՆՔ

1990 թ. ապրիլի 15-ին վերաբացվեց Հաղպատի վանքը: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ վանքի վանահայր է նշանակվել Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հաղպատավանքը իր հիմնադրության օրվանից (991 թ.) եղել է Լոռվա շրջանի հոգևոր կենտրոնը և որ վերջին տասնամյակների ընթացքում Թումանյանի շրջանում ոչ մի գործող եկեղեցի չի եղել, Հաղպատավանքի վանահայրության վրա պարտականություն էր դրված հոգ տանել ոչ միայն Հաղպատավանքի, այլ նաև ողջ շրջանի եկեղեցական, կրոնական և հոգևոր դաստիարակչության կարիքներին: Այդ հոգևոր ծրագիրը արդեն իսկ գործադրության է տրված վանահոր ջանքերով:

Ա.— Վանահայրության առաջին գործը եղավ բացել դպրանոց, ուր այժմ ուսանում են 18 սաներ: Ուրախությամբ կարող ենք հայտնել, որ համապատասխան քննություններ անցկացնելուց հետո Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը նոյեմբերի 4-ին դպրության չորս աստիճաններ շնորհեց բոլոր սաներին, ինչպես նաև վեց սաների շնորհեց ուրար կրելու իրավունք և սարկավագ ձեռնադրեց Գրիգոր Մնացականյանին:

Բ.— Ընդառաջելով Հաղպատավանքի վանահայրության դիմումին Թումանյանի շրջանային և Ալավերդի քաղաքի քաղաքային խորհուրդները որոշում ընդունեցին և Հաղպատավանքի վանահայրությանը հանձնեցին շրջանի բոլոր գյուղական եկեղեցիները, այդ թվում Օձունի Խաչգունդ, Աքորիի